ՌԵԳՈ – ԲՆԱԿԱՐԱՆ ԲԱԶԱՅԻՆ

1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- **ՌԵԳՈ ԲՆԱԿԱՐԱՆ ԲԱԶԱՅԻՆ** ծրագրով՝ ապահովագրվում են բազմաբնակարան շենքերի, առանձնատների և թաունհաուսների հարդարման տարրերը, տեխնիկական սարքավորումները, շարժական գույքը, քաղաքացիական պատասխանատվությունը:
- Վկայագիրն ուժի մեջ է մտնում կնքումից 10 օր անց՝ առանց զննության:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

- Հրդեհ, կայծակի հարված, գազի պայթյուն,
- Ջրից առաջացած վնաս (լրացուցիչ ռիսկ),
- Տարերային աղետներ բացառությամբ երկրաշարժի,
- Կոտրանքով գողություն, կողոպուտ, ավազակություն
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ,
- Բախում, հարված,
- Քաղաքացիական պատասխանատվություն:

ReGo INSURANCE

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, ՏԱՐՐԵՐ

- **Հարդարման տարրերը**, այդ թվում՝ բոլոր ներքին և/կամ արտաքին երեսպատման և ներկարարական աշխատանքները, ներքին հարդարման աշխատանքները, պատերի, հատակների, առաստաղների ծածկույթները, միջսենյակային դռների կառույցները, ներառյալ ապակեպատումը, միջսենյակային պատուհանային կոնստրուկցիաները:

- **Տեխնիկական սարքավորումները**, ոչ տիպային (որոնք Ապահովադիրն է տեղադրել) որոնք իրենց մեջ ներառում են ջեռուցման համակարգերը (այդ թվում հատակի, պատերի, առաստաղի տաքացման համակարգերը), հսկողության և պաշտպանության համակարգերը (այդ թվում տեսախցիկները), հրդեհային անվտանգության, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման (այդ թվում՝ ջրակողպման սարքավորումները, լվացարանները, լոգարանները, լոգախցիկներ և այլն), կոյուղու (այդ թվում սանհանգույցի սանտեխնիկական սարքավորումները), գազամատակարարման, էլեկտրասնուցման համակարգերը:

- **Շարժական գույքը**, որն իր մեջ ներառում է տնային և անձնական կենցաղի առարկաները, այդ թվում՝ կահույք, կենցաղային առարկաներ, ներքին հարդարման առարկաներ և այլն:

ReGo INSURANCE

- **Երրորդ անձանց պատճառված վնասի քաղաքացիական պատասխանատվություն՝** Օրինական հիմքերով կամ Ապահովադրի իմացությամբ (թույլտվությամբ) բնակարանում բնակվող անձանց կողմից բնակելի տարածքի ամենօրյա շահագործման հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատահական և ոչ կանխամտածված հասցված վնասի պատասխանատվություն:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ				
Ներքին հարդարանք	Տնային գույք և տեխնիկական սարքավորումներ	Քաղաքացիական պատասխանատվություն	Ընդհանուր ապահովագրական գումար ՀՀ դրամ	Ընդհանուր ապահովագրավճար ՀՀ դրամ
Ապ. սահմանաչափ	Ապ. սահմանաչափ	Ապ. սահմանաչափ		
1.000.000	500.000	500.000	**2.000.000**	**5.000**

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ				
Ներքին հարդարանք	Տնային գույք և տեխնիկական սարքավորումներ	Քաղաքացիական պատասխանատվություն	Ընդհանուր ապահովագրական գումար ՀՀ դրամ	Ընդհանուր ապահովագրավճար ՀՀ դրամ
Ապ. սահմանաչափ	Ապ. սահմանաչափ	Ապ. սահմանաչափ		
2.000.000	1.000.000	1.000.000	**4.000.000**	**10.000**

* Ընդհանուր ապահովագրավճարը 20%-ով ավելացնելու դեպքում հնարավոր կլինի ընդլայնել ապահովագրական ծածկույթը «Ջրից առաջացած վնաս» ռիսկով:

ReGo INSURANCE

5. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՖՐԱՆՇԻԶԱ (Ոչ պայմանական չհատուցվող գումար) – Չի կիրառվում
- Ամբողջական ապահովագրական ծածկույթ մեկ պայմանագրով (կոնստրուկտիվ տարրեր, ներքին հարդարանք, շարժական գույք, քաղաքացիական պատասխանատվություն)
- Գույքն առանց զննման, գնահատման և շարժական գույքի ցուցակի կազմման ապահովագրելու հնարավորություն:
- Վկայագիրն **օնլայն** կնքելու հնարավորություն
- Կարող են ապահովագրվել նաև **վարձակալությամբ** տրամադրված բնակարանները/առանձնատները:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Ապահովադրի և սեփականատիրոջ անձը հաստատող փաստաթուղթ
- Գույքի սեփականության/վարձակալության վկայական
- Ապահովադրի կոնտակտային տվյալներ

060 50 57 57
regoinsurance.am
info@regoinsurance.am
ՀՀ, 0014, ք.Երևան, Կոմիտաս 62 շ., 93-93/1 տարածք